ԻՆՖՈՐՄԱՑԻԱ ИНФОРМАЦИЯ

«ԷՅՐԵՆԵ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ XIV ԳԻՏԱԺՈՂՈՎԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

1976 թ. մայիսի 18—23-ը Երևանում տեղի ունեցավ սոցիալիստական երկրների անտիկ շրջանի մասնագետներին միավորող «էյրենե» կազմակերպության հերթական՝ XIV կոնֆերանսը, նվիրված անտիկ պատմության, բանասիրության և նյութական ու հոգևոր մշակույթի հարցերին։ Կոնֆերանսի աշխատանքներին մասնակցում էին ՍՍՀՄ և Եվրոպայի սոցիալիստական երկրների ավելի քան 50 քաղաքներից ժամանած շուրջ 250 մասնագետներ, որոնց թվում ՍՍՀՄ ԳԱ ակադեմիկոս Բ. Բ. Պիոտրովսկին, ակադեմիկոսներ Վ. Գեորգիևը (Բուլղարիա), Հ. Բեժունսկա-Մալովիստը (Լեհաստան), Ի. Իրմշերը, Է. Վելսկոպֆը (ԳԴՀ), Յա. Հարմաթան (Հունգարիա), ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Ս. Տ. Երեմյանը, Բ. Ն. Առաքելյանը, Գ. Բ. Ջահուկյանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամներ Վ. Կ. Ջալոյանը, Գ. Խ. Սարգսյանը, դոկտորներ Դ. Բ. Շելովը, Ե. Մ. Շտաերմանը, Ե. Ս. Գոլուբցովան, Ի. Դ. Ամուսինը, Օ. Դ. Լորդկիպանիձեն, Ս. Ս. Արևշատյանը, Հ. Մ. Բարթիկյանը (ՍՍՀՄ), Բորժակը (Հունգարիա), Յա. Վիկարյակը (Լեհաստան), Մ. Պետրուշևսկին (Չեխոսլովակիա), Վ. Իլիեսկուն (Ռումինիա), Պ. Օլիվան (Չեխոսլովակիա) և ուրիշներ։

Անտիկ շրջանի մասնագետների այս հերթական գիտաժողովը Երևանում գումարելու որոշումը բացատրվում է նրանով, որ մեր հանրապետությունը հարուստ է անտիկ հուշարձաններով և մասնակիցները կարող էին անձամբ մոտիկից ծանոթանալ դրանց։ Մյուս կողմից, հին պատմությամբ զբաղվող սովետահայ մասնագետների աշխատությունները արդեն գրավել են Սովետական Միության գիտնականների, ինչպես և արտասահմանյան մասնագետների ուշադրությունը և մեր հանրապետությունը դարձել է անտիկ հասարակության պատմության ուսումնասիրման կարևոր օջախ։

Գիտաժողովին ներկայացված զեկուցումներն ու հաղորդումները նվիրված էին անտիկ աշխարհի և նրա հետ առնչված երկրների քաղաքական պատմության, սոցիալ-տնտեսական հարաբերությունների, նյութական և հոգևոր մշակույթի, բանասիրության ամենատարբեր հարցերին։ Այս փաստն ինքնին վկայում է, որ անտիկ ժամանակաշրջանի պատմությունը դարձել է ուսումնասիրության բազմաճյուղ մի բնագավառ և այժմ արդեն պարտադիր է խիստ և նեղ մասնագիտացում։ Այսպիսի դրությունը անհրաժեշտություն առաջացրեց գիտաժողովին ներկայացված զեկուցումներն ու հաղորդումները բաժանել հինգ սեկցիաների և երկու ենթասեկցիաների միջև. 1. Անտիկ աշխարհը և Արևելքը (պատմության և մշակույթի ենթասեկցիաներով), 2. Ստրկատիրական արտադրաեղանակի ճգնաժամը, 3. Մարդու պատկերումը անտիկ գրականության և արվեստի մեջ, 4. Նոր մեթոդներ և հայտնագործություններ դասական լեզվաբանության բնագավառում, 5. Հնագիտական նորագույն հայտնագործություններ (երկու ենթասեկցիաներով)։

Գիտաժողովի պլենար նիստը գումարվեց ՀՍՍՀ ԳԱ նիստերի մեծ դահլիճում։ Իր բացման խոսքում ակադ. Բ. Բ. Պիոտրովսկին բնութագրեց «էյրենե» կազմակերպության առաջացումը և նշեց, որ սոցիալիստական երկրների անտիկ մասնագետները հատուկ խորհուրդ են տեսնում իրենց կազմակերպության «էյրենե» անվան մեջ, որը հունարեն նշանակում է «խաղաղություն»։

Նիստում կարդացած իրենց զեկուցման մեջ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Բ. Ն. Առաքելյանը և ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Գ. Խ. Սարգսյանը բնութագրեցին հին Հայաստանի նյութական և հոգևոր մշակույթի մեջ նկատվող հելլենիզմի գծերը։ Նշվեց, որ մ. թ. ա. IV դարի վերջից Հայաստանը թևակոխում է պատմական զարգացման նոր շրջան, ընդգրկվելով հելլենիստական աշխարհի ոլորտի մեջ։ Այդ ժամանակ տեղի է ունենում նշանակալից բեկում երկրի սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքում։ Այդ բեկումն առավել ուժեղանում է մ. թ. ա. II—I դդ., հայկական միասնական պետության առաջացմանը զուգընթաց։ Նշվեց, որ Հայաստանի այդ շրջանի նյութական մշակույթի ուսումնասիրման համար բացառիկ նշանակություն ունեն Գառնիի, Արմավիրի և Արտաշատի պեղումներից հայտնաբերված նյութերը։ Հելլենիզմի գծեր նկատելի են ոչ միայն նյութական,

այլև հոգևոր մշակույթի մեջ։ Դա արտահայտվել է առաջին հերթին հունարենի, ինչպես նաև հելլենիստական պաշտամունքային տարրերի ներթափանցումով Հայաստան։ Հայաստանի և Առաջավոր Ասիայի մյուս երկրների մշակույթներում նկատվող հելլենիստական գծերը պիտի համարել հետևանք տեղական և հելլենական մշակույթների համագործակցության՝ տեղական հողի վրա։

Ակադ. Է. Վելսկոպֆի (ԳԴՀ) զեկուցումը նվիրված էր մարդու կերպարին անտիկ աշխարհում, խեղճերի և իրավազուրկների ինքնագիտակցության բարձրացմանը։ Հոմերոսյան պոեմների, անտիկ պատմիչների, ողբերգակների, փիլիսոփաների երկերի հիման վրա նա հետաքրքիր մեկնություններ տվեց դեմոսի և ստրուկների փոխհարաբերության հարցին։

Նիստի վերջին զեկուցումը (պրոֆ. Ե. Մ. Շտաերման, Մոսկվա) վերաբերում էր ստրկատիրական արտադրաեղանակի ճգնաժամի հարցին։ Հանրագումարի բերելով սովետական գիտնականների և իր անձնական ուսումնասիրությունների արդյունքները, զեկուցողը հանգում է այն եզրակացության, թե հռոմեական ստրկատիրական հասարակության ճգնաժամը և անկումը հետևանք էր ոչ թե արտաքին քաղաքական հանգամանքների, այլ ներքին սոցիալ-տնտեսական գործոնների։

Գիտաժողովի հետագա աշխատանքներն ընթացան նեղ մասնագիտական սեկցիաներում։

«Անտիկ աշխարհը և Արևելքը» սեկցիայում քննարկվեցին Արևելքի տարբեր երկրների (Փոքր Ասիա, Անդրկովկաս, Բոսպորյան թագավորություն, Միջին Ասիա, Մերձավոր Արևելք, Հնդկաստան) և անտիկ աշխարհի քաղաքական, տնտեսական, մշակութային առնչություններին և փոխազդեցություններին նվիրված մի շարք հարցեր։

Ի. Բ. Բրաշինսկին Մերձսևծովյան ափերի հունական գաղութացման պատմությանը նվիրված իր զեկուցման մեջ նշեց, որ այդ գաղութացումը տարբեր շրջաններում կրել է տարբեր բնույթ, եղել է առավել կամ պակաս ինտենսիվ, նայած տեղական բնակչության առավել կամ պակաս դարգացմանը։

Ա. Մ. Խազանովը անդրադառնալով Մերձսևծովյան շրջանում հին հունական քաղաքների և սկյութական բնակչության փոխհարաբերություններին, նշեց, որ անտիկ քաղաքակրթության ազդեցությունը սկյութական հասարակության վրա եղել է առավելապես տնտեսական և պակաս չափով՝ մշակույթի ասպարեզում։

Գ. Ա. Ցվետաևայի հաղորդման նպատակն էր ցույց տալ, որ Բոսպորի մշակույթը եղել է հելլենական, որը մ. թ. ա. առաջին դարերում կրել է ուժեղ բարբարոսական, առավելապես սարմատական բնույթ։ Հռոմի քաղաքական ոլորտում ներգրավվելուց հետո այն կրել է նաև հռոմեական մշակույթի ազդեցությունը, սակայն ավելի փոքր չափով։

Յու. Մ. Դեսյատչիկովի հաղորդումը նվիրված էր I—IV դդ. բոսպորյան հասարակության ուսումնասիրությանը։ Նշվեց, որ Բոսպորյան թագավորության հասարակությունը բաղկացած էր հիմնականում երեք դասերից, որոնք համապատասխանում էին հին Հայաստանի և հին Վրաստանի դասերին (արիստոպիլիտներ-նախարարներ-էրիսթավիներ, պիլիտներ-ազատներ-թաձրևուլիներ, պելատներ-շինականներ)։

Ն. Վ. Խազարաձեի հաղորդման բնույթը աղբյուրագիտական էր։ Անդրադառնալով հունական աղբյուրներում մոսքերի տարաբնակեցման մասին եղած վկայություններին, նա փորձեց բացահայտել այդ վկայությունների ակունքները և արժանահավատությունը։

Ա. Ի. Բոլտունովան իր զեկուցման մեջ նշեց, որ պատմագրության մեջ ընդհանրապես տարածված է այն պատկերացումը, թե կոլխերին հաջողվել էր իրենց քաղաքական անկախությունը պահպանել Աքեմենյանների ոտնձգություններից։ Առարկելով այդ պատկերացմանը, զեկուցողը նշեց, որ Հերոդոտոսի տվյալներով, կոլխերը ևս քաղաքական նույնպիսի վիճակում էին, ինչ Աքեմենյաններին հպատակ մյուս ժողովուրդները։

Յու. Ն. Վորոնովը, անդրադառնալով անտիկ աշխարհի և Հյուսիսային Կոլխիդայի առնչություններին, բնութագրեց Կոլխիդայի ծովափին հիմնադրված հունական պոլիսների և տեղաբնիկների փոխհարաբերությունները և դրանց բնույթի փոփոխվելը Հռոմի գերիշխանության ժամանակ։ Եթե հելլենները առաջին հերթին առևտրականներ էին, արհեստավորներ ու երկրագործներ, ապա հռոմայեցիները իրենց տերության շահերը պաշտպանող ռազմիկներ էին։

Մ. Պ. Ինաձեի հաղորդումը նվիրված էր Անդրկովկասում հելլենիզմի ազդեցության հարցին։ Նա ցույց տվեց, որ այդ ազդեցությունը ոչ միայն և ոչ այնքան մշակութային էր, որքան իր արտահայտությունն էր գտնում անդրկովկասյան երկրների սոցիալ-տնտեսական կյանքի տարբեր կողմերում։

Ն. Յու. Լոմոուրին իր հաղորդմամբ անդրադարձավ Հռոմի և Արևմտյան Վրաստանի քաղաքական, տնտեսական և մշակութային հարաբերություններին, ցույց տալով, որ Հռոմի ազդեցությունն այստեղ եղել է համեմատաբար ոչ ուժեղ։

Մ. Ի. Ռաստովցևան իր հաղորդմամբ նպատակ էր դրել վերջին տարիների ընթացքում Ադրբե-

ջանի տարածքի վրա կատարվող պեղումներից հայտնաբերված նյութերով բացահայտել անտիկ մշակույթի բեղմնավոր ազդեցությունը աղվանական ցեղերի նյութական և հոգևոր մշակույթի վրա։

Ռ. Ե. Արեշյանը, անդրադառնալով Մերձավոր Արևելքում և Էգեյան ծովի ավազանում երկաթի հայտնվելուն, պեղածո նյութերի, ինչպես նաև անտիկ գրավոր աղբյուրների տվյալների հիման վրա ցույց տվեց դարերի ընթացքում երկաթի ունեցած հեղափոխիչ ազդեցությունը ոչ միայն արտադրության մեջ, այլև մարդկային մտածողության բնագավառում։

Ե. Ս. Ռոլուբցովայի զեկուցումը նվիրված էր անտիկ ժամանակաշրջանում Փոքր Ասիայի գյուղական բնակչության իդեոլոգիական հայացքներին, որոնց դրսևորման հիմնական ձևը եղել է կրոնը։ Այդ հայացքների ընդհանուր պատկերը խայտաբղետ էր՝ երկրի տարբեր մասերի սոցիալ-տնտեսական ու քաղաքական զարգացման տարբեր աստիճաններին համապատասխան։

Ս. Ս. Սոլովյովան իր զեկուցման մեջ անդրադարձավ մ. թ. ա. VII դարի լյուդիական թագավորության խաղացած քաղաքական ու մշակութային դերին հին աշխարհում Արևմուտքի և Արևելքի միջև, ցույց տվեց, որ Արևմուտքի նկատմամբ այդ դերը հետադիմական էր, պահպանողական, իսկ Արևելքի նկատմամբ առաջադիմական։

Ի. Ս. Սվենցիցկայան նույնպես, ուսումնասիրելով լյուդիական թագավորության պատմությունը, հանգել է այն եզրակացության, թե այդ տերության կազմում ընդգրկված հոնիական քաղաքները, որոնք առևտրա-արհեստագործական խոշոր կենտրոններ էին, վայելում էին ներքին ինքնավարություն, բայց պարտավոր էին վճարել կանոնավոր հարկ և զորական միավորումներ հատկացնել լյուդիական թագավորին։

Վ. Դ. Ժիգուլինի և Տ. Ա. Մոիսեևայի հաղորդումները վերաբերում էին կելտական ցեղերի գաղթին դեպի արևելք, Փոքր Ասիայի կենտրոնում նրանց ստեղծած պետությանը (Գալատիա), հելլենիստական աշխարհի քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքում նրանց խաղացած դերին։

Լ. Ս. Ռլյինսկայայի զեկուցումը նվիրված էր հռոմեական տիրապետության հաստատման շրջանում Հռոմի հետ հելլենիստական Փոքր Ասիայի տիրող խավերի ունեցած փոխհարաբերությունների հարցին։ Նա ցույց տվեց, որ տիրող խավերը ունեցել են հռոմեական կողմնորոշում, մինչդեռ ժողովրդական զանգվածները եղել են հակահռոմեական շարժումների հիմնական կրողները։

Բ. Յա. Ստավիսկու զեկուցման նպատակն էր ցույց տալ, որ անտիկ աշխարհը էապես նպաստել է միջինասիական ժողովուրդների մշակույթի և արվեստի զարգացմանը։

Ի. Տ. Կրուգլիկովայի զեկուցման մեջ ևս ցույց տրվեց, որ հելլենական ավանդույթները հարավային Բակտրիայի մշակույթի մեջ շարունակվել են մինչև ուշ անտիկ շրջանը և մեծապես ազդել են քուշանների մշակույթի վրա։

Ռ. Մ. Ռահմանովան, քննարկման առնելով Միջին Ասիայի դիվանագիտական կապերը հարևան երկրների հետ, ցույց տվեց, որ այդ կապերը անտիկ ժամանակաշրջանում հասել են Հեռավոր Արևելքից մինչև Միջերկրական ծով։

Ի. Շ. Շիֆմանի զեկուցումը նվիրված էր Պալմիրայի պետության դեռևս քիչ ուսումնասիրված պատմությանը՝ Զենոբիայի իշխանության շրջանում։ Զեկուցողը նշեց, որ Պալմիրայի պետության առաջացումը II—III դդ. Արևելքում Հռոմեական կայսրության ապրած ճգնաժամի բարձրակետն էր։ Նա ուրվագծեց այդ պետության սոցիալ-տնտեսական իրավիճակը և փորձեց բացահայտել Զենոբիայի պարտության պատճառները Հռոմի դեմ մղած պայքարում։

Գ. Մ. Բոնգարդ-Լևինը իր զեկուցման մեջ նշեց, որ Հնդկաստանը և անտիկ աշխարհը ունեցել են բազմապիսի առնչություններ (մշակութային, քաղաքական, առևտրական), որոնց մասին հետաքրքիր վկայություններ կան հին հունական աղբյուրներում։ Այդ վկայությունները հաստատվում են նորագույն տվյալներով և ցույց են տալիս հելլենական ազդեցությունը հնդկական հասարակության կյանքի մի շարք երևույթների վրա։

Ն. Ա. Մոլևի և Ժ. Գ. Էլչիբեկյանի հաղորդումների նյութը Փոքր Հայքի պատմությունն էր, սկսած այն ժամանակից, երբ հայկական այդ երկրամասը նվաճվեց Միհրդատ Պոնտացու կողմից, մինչև այն շրջանը, երբ Փոքր Հայքը վերջնականապես կորցրեց իր անկախությունը և միացվեց Հռոմի տիրույթներին։

Գիտաժողովում առանձին ուշադրության արժանացավ անտիկ քաղաքների պատմության ուսումնասիրումը։ Յու. Վ. Անդրեևը իր զեկուցման մեջ նշեց, որ հունական պոլիսը և Արևելքի քաղաք-պետությունները չի կարելի նույնացնել ոչ քաղաքական առումով, ոչ էլ սոցիալ-տնտեսական կառուցվածքի տեսակետից։ Մինչ Հունաստանում պոլիսների զարգացման ուղին դեմոկրատիան էր, Արևելքի քաղաքներից և ոչ մեկը չբարձրացավ օլիգարխիական ռեսպուբլիկայից վեր, նրանց մեծ մասը չհասավ նույնիսկ դրան։

Գ. Ա. Կոշելենկոն անդրադարձավ հունական քաղաքի տեղի հարցին հելլենիստական պետու-

թյան մեջ։ Նա նշեց, որ հելլենիստական երկրներում հողի գերագույն սեփականատերը թագավորն էր։ Նման պետության կազմում քաղաքն արդեն զրկվում էր իր մի շարք առանձնաշնորհումներից, որի հետևանքով էլ մշտական կոնֆլիկտ էր առաջանում կենտրոնական իշխանության և քաղաքի միջև։

Լ. Մ. Գլուսկինան իր զեկուցման նյութ էր դարձրել հունական քաղաքներին շնորհված անձեռնմխելիության և ապաստանի իրավունքի հարցը։ Այդ իրավունքը աստիճանաբար ընդունում է քաղաքական բնույթ։ Այդպիսի իրավունքը հաստատվում էր Դելֆյան սրբավայրի և այն միապետի կողմից, որի գերիշխանության տակ գտնվում էր տվյալ քաղաքը։

Գ. Խ. Սարգսյանն իր զեկուցման մեջ կանգ առավ ուշ բաբելոնական քաղաքում իրականացվող ապրուստի (բառացի՝ բաժին, վիճակ) և հելլենական պոլիսում ընդունված՝ նյութական բարիքների և դրամի բաշխման երևույթների վրա, ցույց տալով դրանց առաջացումը և նմանությունը։ Նա միաժամանակ նշեց, որ այդ եղանակով իշխանությունները կարգավորում էին արտադրանքի բաշխումը իրական և պոտենցիալ ստրկատերերի միջև, որոնցից կազմված էր համայնքը, ամրապնդում իրենց սոցիալական բազան և բարձրացնում կոլեկտիվի համերաշխությունը, որը հակադրվում էր շահագործվողների զանգվածին։

Հին Եմենի պատմությանը նվիրված իր զեկուցման մեջ Ա. Գ. Լունդինը նշեց, որ հին արաբական քաղաքներն ունեցել են պոլիսային կառուցվածք և եզրակացրեց, թե պոլիսային կազմակերպությունը միայն անտիկ աշխարհին չէր հատուկ, այլ հասարակության զարգացման օրինաչափ և անհրաժեշտ տարր էր հին աշխարհում, դասակարգային հասարակության և ստրկատիրական հասարակարգի կազմավորման փուլում։

Մի շարք զեկուցումներ վերաբերում էին անտիկ պատմագրության հարցերին։ Ա. Ի. Նեմիրովսկին իր զեկուցման մեջ բացահայտեց հունական պատմագրության առաջացման հանգամանքները, ցույց տալով նաև դրա արևելյան արմատները. միաժամանակ, սակայն, նշեց, որ Արևելքում չառաջացավ այդպիսի պատմագրություն, սոցիալ-տնտեսական ուրույն հարաբերությունների պատճառով։

Ի. Վ. Պյանկովը, անդրադառնալով անտիկ պատմագրության ստեղծած «Ասիայի պատմության» մեջ ուրվագծված իրանական ժողովուրդների պատմագրությանը, ցույց տվեց այդ սխեմայի իրական և ոչ իրական տարրերը։

Ս. Ա. Վարդանյանն իր զեկուցման մեջ նշեց, որ հայկական բժշկագիտությունն իր արմատներով շատ հին է և անվել է ժողովրդական կենարար ակունքներից, բայց իր զարգացման որոշակի փուլում (V—VIII դդ.) կրել է անտիկ բժշկագիտության (Հիպոկրատ, Գալեն և ուրիշներ) բարերար ազդեցությունը։

Առանձին սեկցիայի նիստերում ներկայացված էին ստրկատիրության ճգնաժամին վերաբերող տեսական նշանակություն ունեցող զեկուցումներ։ Ի. Բեժունսկա-Մալովիստի (Լեհաստան) զեկուցումը նվիրված էր անտիկ ստրկության ճգնաժամի չափանիշների հարցերին։

Վ. Ի. Կուզիշչինի զեկուցման մեջ քննարկվում էր հռոմեական լատիֆունդիաների ներքին կառուցվածքը որպես տնտեսության որոշակի տիպ և նրանց աստիճանական էվոլյուցիան, որի հետևանքով լատիֆունդիան դառնում է միջնադարյան վոտչինայի նախատիպը։

Ա. Ի. Պավլովսկայան, քննության առնելով հռոմեական հասարակության մեջ ստրուկների և կոլոնների աշխատանքի եկամտաբերության հարցը, ցույց տվեց, որ կոլոնների աշխատանքը առավել շահավետ էր և որ մասամբ դրանով է բացատրվում Արևելքում ստրկական աշխատանքի սահմանափակ օգտագործումը։

Ռ. Ե. Լյաստը, իր հաղորդման մեջ անդրադառնալով հռոմեական հասարակության դասային կառուցվածքի էվոլյուցիային, նշեց, որ կայսրության ժամանակ ներփակ դասային խմբերի կազմավորումը պիտի դիտել որպես Հռոմի հասարակության ճգնաժամի ցուցանիշ։

Ս. Ռ. Կիմը իր զեկուցման մեջ ցույց տվեց հռոմեական հասարակության մեջ տնտեսական օբյեկտիվ գործոնների պատճառով տեղի ունեցած հակամարտ դասակարգերի աստիճանական փոխակերպումը, որը ի վերջո հասցրեց նրանց ընդհանուր կործանմանը և նոր, ֆեոդալական հասարակության առաջացմանը։

Ս. Տ. Երեմյանի զեկուցումը նվիրված էր սոցիալ-տնտեսական հարաբերությունների վերլուծությանը Հայաստանում II—III դդ., երբ ճգնաժամ ապրող ստրկատիրական հասարակության ընդերքում առաջանում էր ֆեոդալական հողատիրությունը։ Այդ երևույթի խորացմանը նպաստում էր քաղաքների անկումը Հայաստանում, թագավորական իշխանության վերացումը և նախարարությունների հզորացումը, այնպես որ IV—V դդ. արդեն Հայաստանում իր հիմնական գծերով կազմավորվել էր ֆեոդալական հողատիրությունը։

Վ. Վելկովը (Բուլղարիա) իր զեկուցման մեջ ուրվագծեց III դարի Թրակիայի տնտեսական զարգացման վիճակը և մանրամասն կանգ առավ IV—V դդ. Թրակիայում ստրկատիրական հասարակության աստիճանաբար ֆեոդալականի անցնելու հարցերի վրա։

Դ. Նիկոլովի (Բուլղարիա) զեկուցումը նույնպես նվիրված էր Թրակիայում մ. թ. IV դարում ստրկատիրական արտադրաեղանակի քայքայման և կոլոնատի առաջացման հարցերին։

Ի. Խանի (Ռումինիա) հաղորդումը վերաբերում էր ուշ անտիկ շրջանի ուտոպիստական պատկերացումների մեջ ստրկատիրության ճգնաժամի արտացոլման փաստերին։ Նշվեց, որ ուշ անտիկ շրջանի ուտոպիստական պատկերացումները էապես տարբերվում էին նախորդ՝ դասական, հելլենիստական և հռոմեական շրջանների պատկերացումներից։ Այս վերջին շրջանում արդեն առաջադրվում էին ստրկության վերացման, հողի ընդհանուր սեփականության և նյութական բարիքների նկատմամբ հավասարության հարցերը։

Գ. Վ. Կորանիշվիլու զեկուցումը նպատակ ուներ բացահայտել անտիկ քաղաքակրթության անկման պատճառները։ Նա նշեց, որ այդ անկման գլխավոր պատճառը եղել է դասական ստրկությունը. մնացած պատճառները (սոցիալական հոգեբանություն, պետական կարգ, բարբարոսների արշավանքներ) եղել են երկրորդական։

Կ. Պ. Կորժևան իր հաղորդման մեջ ցույց տվեց, որ II դարում հռոմեական կայսրության մեջ գաղափարական պայքարը հեթանոսության և վաղ քրիստոնեության միջև եղել է դասակարգային պայքարի ձևերից մեկը։

Գիտաժողովում լսվեցին նաև աղբյուրագիտական զեկուցումներ։

Մ. Կ. Տրոֆիմովան, անդրադառնալով 1945 թ. Եգիպտոսում հայտնաբերված զպտերեն ձեռագրերին, նշեց, որ Նագ-Համմադի այդ ձեռագիր հուշարձաններն արդեն դառնում են պատմական, պատմա-կրոնական, փիլիսոփայական, գրականագիտական և լեզվաբանական ուսումնասիրությունների առարկա։

Մ. Մ. Ելիզարովայի զեկուցումը նվիրված էր «Բեն-Սիրի իմաստությունների» տարբեր լեզուներով կատարված թարգմանությունների առանձնահատկությունների բացահայտմանը։

Ս. Մ. Կրկյաշարյանն անդրադարձավ Հերոդոտոսի, Քսենոփոնի և Ստրաբոնի մի շարք հաղորդումներին, առաջադրեց իր նոր թարգմանություններն ու մեկնությունները, որոնք էական ուղղումներ են մտցնում հայ ժողովրդի հին շրջանի պատմության մի շարք հարցերում։

Բ. Ս. Կաուխչիշվիլու զեկուցման մեջ բնութագրվեցին հույն հեղինակների վկայությունները Իբերիայի մասին։ Զեկուցողը վեր հանեց այդ վկայությունների նշանակությունը Վրաստանի հին շրջանի պատմության ուսումնասիրման համար։

Ա. Ս. Ստեփանյանը, անդրադառնալով I դարի կեսերին Վարդանի և Գոտարզի միջև պարթևական գահի շուրջ մղված պատերազմին (որը վերջացավ Վարդանի հաղթանակով), նշեց, որ այդ առթիվ Տակիտոսի հաղորդած տեղեկությունները հաստատվում են չինական աղբյուրների տվյալներով։

Ն. Ա. Շահնազարյանն իր զեկուցման մեջ ցույց տվեց, որ պարսկա-հռոմեական հարաբերությունները IV դարից մինչև օրս ուսումնասիրվում են հիմնականում Ամմիանոս Մարկելլինոսի հաղորդած տվյալների հիման վրա։ Ցավոք, ուսումնասիրողները այս առումով պատշաճ ուշադրություն չեն դարձրել Փավստոս Բուզանդի «Պատմությանը», որը, ինչպես ցույց տվեց զեկուցողը, եզակի սկզբնաղբյուր է այդ շրջանի պատմության համար։

Հ. Մ. Բարթիկյանի զեկուցումը նվիրված էր անտիկ հեղինակների երկերի գրաբար թարգմանություններին և դրանց պատմագիտական արժեքավորմանը։

Շահեկան էին անտիկ բանասիրությանը նվիրված զեկուցումները, որոնցում արտացոլված էին վերջին տարիներին այդ ուղղությամբ ձեռք բերված նվաճումները։

Գ. Բ. Ջահուկյանն իր զեկուցման մեջ նշեց, որ կիպրոսական-հունարեն երկլեզվյա արձանագրության մի շարք դեռևս անվերծանելի բառերը հնարավոր է վերծանել խուրրի-ուրարտերենի օգնությամբ և ցույց տվեց վերծանման նման եղանակի արդյունավետությունը։

Լ. Ա. Գինդինի հաղորդումը նվիրված էր հունա-լատինական վիմագիր արձանագրություններում պահպանված հատուկ անունների միջոցով թրակիական լեզվի որոշ տարրեր վերականգնելու փորձերին։

Օ. Ս. Շիրոկովն իր զեկուցման մեջ քննարկեց արմենա-հունական էթնոգենետիկական առնչությունները պատմա-համեմատական բանասիրության տվյալների հիման վրա և առաջ քաշեց հույների փոքրասիական ծագման ենթադրությունը։

Վ. Պ. Ներոզնակի զեկուցման առարկան հին մակեդոներենի և հին հունարենի ազգակցության հարցն էր։ Իր եզրակացության մեջ նա նշեց, որ հին մակեդոներենը եղել է ոչ հունական, հին բալկանյան լեզու, սակայն հետագայում կրել է հունարենի ուժեղ ազդեցությունը։

Յա. Հարմաթան (Հունգարիա) մանրամասն վերլուծեց Հերոդոտոսի «Պատմության» մեջ տեղ գտած նովելները, ցույց տալով դրանց պատմական արմատները և գեղարվեստական արժանիքները։

Գ. Ի. Դովգյալոն կոնկրետ օրինակներով ցույց տվեց, որ Հերոդոտոսի մի շարք պատմվածքնե-

ում կան խեթական պատմական ավանդություններին համապատասխանող տվյալներ։

Է. Լ. Դանիելյանի զեկուցման առանցքը կազմում էին Պտղոմեոսի երկում պարթևական պետությանը վերաբերող տվյալները, որոնց հիման վրա որոշվում են այդ պետության սահմանները մ. թ. ա. II դարի կեսերին։

Լ. Ի. Գրացիանսկայան, անդրադառնալով Ստրաբոնի ոճի հարցերին, ցույց տվեց, որ նրա «Աշխարհագրությունը» ոչ թե մեքենայաբար կատարված քաղագրություն է, ինչպես պնդում են ոմանք, այլ նրա հավաքած տվյալների ստեղծագործական համադրում։

Ա. Ն. Մուրադյանը Հայերենի հունարան դպրոցին նվիրված իր զեկուցման մեջ վեր հանեց այդ դպրոցի հիմնադիրների լեզվաշինարարական աշխատանքի էությունը, նրանց կատարած թարգմանությունների և հեղինակած ինքնուրույն երկերի նշանակությունը հայ ժողովրդի մշակութային և քաղաքական կյանքում։

Գիտաժողովում առանձին պրոբլեմ էր դարձել «Մարդու պատկերումը անտիկ գրականության և արվեստի մեջ» հարցը։

Անտիկ հասարակության խոշորագույն նվաճումներից մեկն էլ փիլիսոփայական մտքի զարգացումն էր։ Այս հարցին էին նվիրված գիտաժողովի մի շարք մասնակիցների զեկուցումները (Ա. Ֆ. Լոսև, Վ. Կ. Ջալոյան, Ս. Ս. Արևշատյան և ուրիշներ)։

Համեմատաբար սակավ էին անտիկ դրամագիտության հարցերին վերաբերող զեկուցումները (Ֆ. Ռեդո, Խ. Ա. Մուշեղյան, Գ. Վ. Սարգսյան)։ Առավել պատկառելի թիվ կազմեցին հնագիտական նորագույն հայտնագործությունների մասին զեկուցումները, որոնք մասնակիցներին ծանոթացրին հիմնականում Սև ծովի անտիկ հնավայրերի, Վրաստանում, Հայաստանում, պատմական Աղվանքում, Միջին Ասիայում և Բալկանյան թերակղզում կատարվող պեղումների նյութերին։

Յու. Գ. Վինոգրադովի և Ա. Ս. Ռուսաևայի հաղորդման համաձայն 1975 թ. Օլվիայում հայտնաբերված մի հունարեն արձանագրությամբ լիովին պարզվում է միլետյան տոմարի ամիսների անվանումը և հաջորդականությունը։ Օլվիայի արվարձանի պեղումները, ինչպես վկայեց Յու. Ս. Կոզուբը, հաստատում են Հերոդոտոսի հաղորդումները այդ բնակավայրի մասին, որը գոյություն է ունեցել մ. թ. ա. VI—IV դդ.։ Վ. Վ. Ռուբանը հաղորդեց, որ վերջին տարիներս բացված են անտիկ դամբարաններ Օլվիայի մոտ, որտեղից հայտնաբերված նյութերը խոշոր նշանակություն ունեն ընդհանրապես վաղ հելլենիստական տնտեսության ուսումնասիրման համար։ Խերսոնեսի հնագիտական բազմամյա պեղումների ընթացքում արշավախմբի ձեռք բերած ընդհանուր հաջողություններին էր նվիրված Գ. Դ. Բելովի հաղորդումը։ Ռ. Ն. Ֆյոդորովը քննարկման ենթարկեց Խերսոնեսում հայտնաբերված անտիկ կառույցների ճարտարապետությունը, որը տեղական ավանդույթների և հույն դասական ճարտարապետության զուգակցման լավագույն նմուշ է։ Ա. Ա. Շչեպինսկին Նագայչինսկի կուրգանում (Ղրիմ) հայտնաբերված հնագիտական հարուստ նյութի հիման վրա ցույց տվեց, որ I դարում սարմատները, որպես սկյութների դաշնակիցներ, նշանակալից դեր են խաղացել Հյուսիսային մերձսևծովյան տափաստաններում ապրող ցեղերի կյանքում։ Ն. Ա. Գրաչի հաղորդումը նվիրված էր Նիմֆեյի (Կերչի մոտ) դամբարանադաշտի վերջին տարվա պեղումներին, որոնց միջոցով բացվել են ընտանեկան հարուստ դամբարաններ, նրանցից մեկի պատերին կան բարձրաքանդակներ։ Դամբարանադաշտը գոյություն է ունեցել I—III դդ.։ Ե. Գ. Կոստանայանը, հանրագումարի բերելով Պորթմիոն (Կերչի մոտ) բերդաքաղաքի պեղումների արդյունքները, նշեց, որ քաղաքը գոյություն է ունեցել մ. թ. ա. VI—I դդ. և վերակառուցվել է մ. թ. ա. III դարում, որպես Բոսպորյան թագավորության պաշտպանական ընդհանուր սիստեմի օղակներից մեկը։ Վ. Վասիլևը (Բուլղարիա) իր զեկուցման մեջ Թրակիայում հայտնաբերված և մ. թ. II—III դդ. վերաբերող մի շարք բրոնզե ռելյեֆ պատկերների հիման վրա հանգեց այն եզրակացության, որ Թրակիա պրովինցիայում այդ ժամանակ հաստատված են եղել փոքրասիական և սիրիական կոլոնիստներ։ Բ. Սուլտովը (Բուլղարիա) իր հաղորդման մեջ Բուտովոյից հայտնաբերված հնագիտական նյութերի հիման վրա ցույց տվեց, որ Թրակիայում ներմուծված խեցեղենը աստիճանաբար փոխարինվում է տեղական վարպետների արտադրանքով։ Օ. Դ. Լորդկիպանիձեն հաղորդում կատարեց վերջին երեք տարում Վանիում հայտնաբերված հնագիտական նյութերի մասին, որոնք արժեքավոր են մ. թ. ա. IV դարի կեսերից սկսած Կոլխիդայի արևելյան մարզերում քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքի զարգացման ընթացքը ուսումնասիրելու համար։

Տ. Կ. Միկելաձեն զեկուցեց VI—V դդ. Փասիսի գետաբերանի մոտ գոյություն ունեցած բնակավայրի պեղումների մասին, որոնք մեծապես կօգնեն անտիկ Փասիս քաղաքի բնույթը որոշելուն։ Ա. Յու. Կախիձեի հաղորդումը նվիրված էր Պիչնվարիի անտիկ դամբարանադաշտի պեղումների արդյունքներին, որոնք ցույց են տալիս, որ Պիչնվարին եղել է անտիկ աշխարհի

կարևոր կենտրոններից մեկը։ Տ. Ի. Գոլուբկինայի հաղորդումը վերաբերում էր Աղվանքում անտիկ շրջանի դամբարաններից հայտնաբերված նյութերին, որոնք թույլ են տալիս հետևվելու անտիկ ավանդույթների ներթափանցմանը տեղի բնակիչների կյանքի բոլոր բնագավառներում։ Գ. Ա. Տիրացյանի զեկուցումը նվիրված էր Արմավիր քաղաքին և նրա մշակույթին։ Պեղումներից հայտնաբերված նյութերի հիման վրա նա ցույց տվեց, որ Արմավիրը եղել է տեղական մշակութային կարևորագույն օջախներից մեկը և միաժամանակ սերտ առնչություններ է ունեցել հելլենիստական աշխարհի հետ։

Գիտաժողովի եզրափակիչ պլենար նիստում ելույթներ՝ ակադ. Վ. Գեորգիևի (Բուլղարիա), Մ. Դ. Պետրուշևսկու (Հարավսլավիա), Ի. Տ. Կրուգլիկովայի և Դ. Բ. Շելովի զեկուցումները։

Գիտաժողովի մասնակիցները այցելեցին Հայաստանի մի շարք հնավայրերը (Գառնի, Գեղարդ, Էրեբունի, Զվարթնոց, Էջմիածին) և ծանոթացան կատարված պեղումների արդյունքներին։

Կարդացված բոլոր զեկուցումների հիմնական դրույթները առանձին հատորով հրատարակվեցին գիտաժողովի նախօրյակին։

Սոցիալիստական երկրների անտիկ շրջանի մասնագետների «Էյրենե» կազմակերպության XIV գիտաժողովն, անկասկած, նոր խթան կհանդիսանա անտիկ հասարակության պատմությունն ուսումնասիրելու գործում։

Ս. ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆ

ՄԻՋԻՆ ԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ՆՈՐ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

Ախուրյանի շրջանի Քեթի գյուղի շրջակայքում 1969—1975 թթ. ծավալված հնագիտական հետախուզական աշխատանքների շնորհիվ հայտնաբերվել են Հայաստանի նախնադարյան մշակույթի տարբեր փուլերին պատկանող հուշարձաններ, որոնք թվագրվում են մ. թ. ա. III—I հազարամյակներով։

Ստորև ներկայացնում ենք Քեթի գյուղից մոտ երկու կիլոմետր հյուսիս-արևմուտք, «քարոտ հողեր» հանդամասում 1973—1974 թթ. պեղված միջին բրոնզեդարյան դամբարանները, որոնք մեծ հետաքրքրություն են ներկայացնում հիշյալ մշակույթի հուշարձանների սակավաթվության պատճառով, մանավանդ Շիրակի դաշտավայրում։

Դամբարան № 1. — Գտնվում էր մշակված հողատարածության մեջ։ Հայտնաբերման ժամանակ իրենից ներկայացնում էր եզրերը բնական որձաքարերով շարված, անկանոն շրջանաձև հատակագծով, մոտավորապես 7 մ տրամագծով ոչ բարձր դամբարանթումբ, որի արևմտյան և արևելյան հատվածները հողային աշխատանքների ժամանակ ավերվել էին։ Դամբարանափոսը ծածկող խոշոր սալաքարերը և հողի լիցքը հեռացնելուց հետո բացվեց 4 մ երկարությամբ, 2 մ լայնությամբ և 2,5 մ խորությամբ հսկայածավալ, քառանկյունի մի տարածություն, որն իր առանցքով ունի արևելք-արևմուտք դիրքորոշում։ Դամբարանի հատակին բացվեցին մարդու և կենդանու շատ վատ պահպանված կմախքների մնացորդներ։ Ննջեցյալը թաղված էր աջ կողքի վրա, ոտքերը և ձեռքերը կծկված, գլխով հարավ, դեմքով դեպի հյուսիս։ Նրա կողքին և ոտքերի մոտ հայտնաբերվեցին մանր եղջերավոր կենդանու շատ վատ պահպանված ոսկորներ։ Կմախքի ոսկորների և կենդանու գլխի վրա հայտնաբերվեցին քարից, բրոնզից և սպիտակ շաղախից պատրաստված տարատեսակ զարդարանքի առարկաներ՝ տափօղեր, ուլունքներ, շքասեղներ և այլն։ Վերոհիշյալներից բացի դամբարանի հյուսիսային պատի մոտ հայտնաբերվեցին տարբեր ձևի՝ գունազարդ, կետազարդ և փայլեցման եղանակով զարդարված, բաց վարդագույն և սև 17 կավամաններ։

Դամբարան № 2. — Գտնվում էր առաջինից 200 մ հարավ։ Նրա հայտնաբերման ժամանակ դեռևի մակերեսին երևում էին ծածկի երկու սալաքարերը։ Հիմնահողային այս դամբարանը ուներ 1,8 մ երկարություն, 0,7 մ լայնություն և 0,7 մ խորություն։ Հյուսիս-արևմուտք, հարավ-արևելք դիրքորոշում ունեցող դամբարանափոսում դիակի մնացորդներ չհայտնաբերվեցին։ Հյուսիսային պատի մոտ դրված էր ձեռքով պատրաստված, անհարթ մակերեսով, դեպի շուրթը լայնացող կողերով, հարթ հատակով մի կավաման։

Դամբարան № 3. — Տեղադրված էր № 2-ից 7 մ հարավ։ Սա ծածկված էր երեք սալաքարերով, որոնց հեռացնելուց և դամբարանափոսը մաքրելուց հետո բացվեց 2 մ երկարությամբ, 1,4 մ լայնությամբ և 0,8 մ խորությամբ, մայր հողի մեջ փորված, քառանկյունաձև դամբարանափոս, որն ուներ արևելք-